ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 01

ք.Երևան «01» « փետրվարի» 2019թ.

Վարչապետի աշխատակազմն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ՝ Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի պաշտոնակատար Վ.Պապիկյանի, մի կողմից, և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության ռեկտոր Ա. Լոքյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ուսանողների մասնագիտական կրթության իրականացման պարտավորությունները՝ «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, 2018թ դեկտեմբերի 27-ի 1515-Ն որոշմամբ, 1111 ծրագրի 12005 «Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում» միջոցառման համար նախատեսված միջոցների հաշվին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, Վարչապետի աշխատակազմի 1111 ծրագրի, 12005 «Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում» միջոցառման իրականացման համար նախատեսված միջոցների հաշվին:

2.1.2 Պարբերաբար վերլուծել Կատարողի կողմից կատարված ծախսերը, տալ ցուցումներ բացահայտված թերությունների վերացման համար:

2.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգել Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ անմիջականորեն չմիջամտելով վերջինի գործունեությանը:

2.2.2. Կատարողից պահանջել ներկայացնելու հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.2.3 Պարբերաբար վերահսկել ներկայացվող հաշվետվությունների հավաստիությունն ու ճշտությունը:

2.2.4. Վերահսկել Կատարողին հատկացված դրամական միջոցների նպատակային օգտագործումը:

2.2.5. Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

2.3. Կատարողը պարտավոր է՝

2.3.1.Ապահովել սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված պարտավորությունների իրականացումը:

2.3.2.Ամսական կտրվածքով Պատվիրատուին ներկայացնել իր կատարած ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն:

2.3.3. Պատվիրատուի առաջին իսկ պահանջով ներկայացնել աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ հաշվետվություն կամ այլ պահանջվող տեղեկատվություն:

2.3.4. Սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված ժամկետներում և կարգով Պատվիրատուին ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ:

2.3.5 Հաշվետու տարվա վերջին վերադարձնել գումարի չծախսված միջոցները:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Իր կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպման և կատարման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Պատվիրատուին:

2.4.2 Օգտվել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներից:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրով Կատարողի պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է 114 216 300 (մեկ հարյուր տասնչորս միլիոն երկու հարյուր տասնվեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

3.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

3.3. Պայմանագրի 3.1-ին ենթակետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված տարեկան հատկացումների եռամսյակային (աճողական) բաշխվածությանը համապատասխան՝ ամսական կտրվածքով՝ Կատարողի կողմից ներկայացված ֆինանսավորման վերաբերյալ գրությունը ներկայացնելուց հետո:

3.4. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, ինչպես նաև տարածվում է 08.01.2019թ-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Կատարողն աշխատանքների մասին հաշվետվությունները ներկայացնում է Պատվիրատուին յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 15-ը, իսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 10-ը՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N176-Ն, ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի մարտի 28-ի N324-Ն հրամաններով սահմանված ձևերի համապատասխան:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
Վարչապետի աշխատակազմ Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆգործառնական վարչություն Հ/Հ 900011018380 ՀՎՀՀ 02505554 ---------- Կ.Տ.	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ Հասցե՝ ք. Երևան, Կիևյան 8 Երևանի թիվ 1 ՏԳԲ Հ/Հ 900018005646 ՀՎՀՀ 00035088 ---------- Կ. Տ.